ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում»

ԱՌԱՐԿԱ Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ Անուշ Համբարձումյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ս. Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Գայանե Շալունց

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Ազգային արժեքային համակարգը և պատմություն առարկան 6
Արժեքային համակարգ 11
Փորձարարական դասերի իրականացման գործընթացը 11
Օրվա դասի պլան 12
Եզրակացություն 17
Օգտագործված գրականության ցանկ 18

«Դաստիարակութիւն- ահա՛ մեր փրկութեան խարիսխը։

Իբրև հասկացողություն, հայրենիքն ընդգրկում է ոչ միայն անցյալն ու ներկան, այլև՝ գալիքը»։

Գարեգին Նժդեհ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովուրդն իր հազարամյա պատմության ընթացքում շարունակ պայքարել է հանուն գոյի և ամեն գնով փորձել պահպանել այն արժեքները որոնք եղել են ժողովրդի հարատևման գրավական։ Հող, լեզու, պատմություն,հավատ.այս համակարգը դարձավ բոլոր ժամանակների պայքարի հիմնաքար։ Այժմ, իրականության և ազգային գաղափարախոսության բախումը ծնում է նոր խնդիրներ և նոր արժեքների բևեռացում։

Երբ խոսում ենք մարդ-արժեքից մինչև հայրենասիրություն, հաճախ հակադարձում ենք Հայաստանում մեր օրերում տիրող իրականությանը. հնչում են հարցեր, որոնք պահանջում են հստակ պատասխաններ։

Հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվար։ Պետական ու ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի բարելավումը։ Պատմություն առարկան միշտ կարևոր ներդրում է ունեցել ազգային մտածելակերպի, ազգային արժեքների ձևավորման գործում։ Ինչքան էլ փոխվեն հասարակությունների մտածելակերպը, արժեհամակարգը, վերաբերմունքը ժամանակակից գործընթացների հանդեպ, այսօր հրամայական պահանջ է մատաղ սերնդին դաստիարակել անպարտելիության ոգով՝ հերոսական անցյալի օրինակով։

Վերափոխումների շնորհիվ անհատի հոգևոր աշխարհը, երեխաների դաստիարակությունը, մարդկային հարաբերությունները ետին պլան է մղվել։ Մարդ հեռացել է արվեստից, մշակույթից, գրականությունից, որի արդյունքում հոգևոր արժեքները անկում են ապրում։ Անհրաժեշտ է զինել այն գիտակցությամբ, որ բարոյական գերարժեք է հայրենիքի նկատմամբ անմնացորդ սերը։ Հայրենիքը չի տրվում, այն ձեռք է բերվում հայրենաճանաչությամբ։ Ուզում ես տեսնել ժողովրդի ապագան՝ նայիր նրա երիտասարդությանը։

Ուսուցչի կարևորագույն նպատակն ու խնդիրն է ձևավորել և զարգացնել ազգային արժեքային համակարգը, ազգային մտածողությունը։ Յուրաքանչյուր ազգի կենսագործունեություն խարսխված է այնպիսի արժեքների վրա, որոնք ամբողջացնում և ձևավորում են նրա ազգային դիմագիծը։

Ի՞նչ է արժեհամակարգը։ Այն մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է աշակերտի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար։ Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ

ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Այսօր հայ մշակույթը ծածկվել է մի վարագույրով մի կողմում թողնելով մեր մշակույթի դարավոր նվաճումները, պատմամշակութային արժեքները, մյուս կողմում՝ այդ ամենը մոռանալու և քանդելու անկուշտ միտումը, անունը դնելով «Հայացք դեպի Եվրոպա»[1]:

Թեմայի արդիականությունը: Վաղվա օրվա հանդեպ վստահությունը,հավատը կորում է: Յուրաքանչյուր հայ իր ապագան պետք է տեսնի իր հայրենիքում: «Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում դրա պակասից»:[2] Դժվար է խոսել բարձր արժեքներից, դասեր տալ երիտասարդներին, բայց ոչ անհնար, քանի որ այն այնպիսի ներուժ ունի, որի մասին փաստերն են խոսում:

Հետազոտական աշխատանքի օբյեկտն ու առարկան: Հետազոտական աշխատանքի օբյեկտը պատմության դասավանդումն է, իսկ առարկան պատմության դասերին արժեքային համակարգի ձևավորումն ու բացահայտումը:

Հետազոտության նպատակը: Հետազոտական աշխատանքի հիմնական նպատակներն են.

- Բացահայտել ազգային արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում պատմություն առարկայի դերն ու կարևորությունը: Բացահայտել սովորողների վերաբերմունքը հերոսների, պատմական կարևոր իրադարձությունների վերաբերյալ:
- Կիրառել մեթոդական հնարներ, ուսուցման ժամանակակից մեթոդներ սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար:
- Հաճախակի անդրադառնալ հերոսների կերպարներին ,սխրանքներին, որ դաստիարակվեն ռազմահայրենասիրության ոգով:

Հետազոտության խնդիրները: Ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը, մեդիագրագիտության շնորհիվ տեղեկտվական հեղեղի մեջ կողմնորոշվելու և անհրաժեշտ նյութն ընտրելու կարողությունը: Այսօր սովորողների դաստիարակության գործն ընթանում է ժողովրդագրական մշակութային, սոցիալական, կրթական, ընտանեկան և այլ հանգամանքների ազդեցության ներքո:

Հետազոտության մեթոդները: Ելնելով առաջադրված խնդիրներից՝ կարելի կիրառել հետևյալ մեթոդները.

---

[1]«Գրական երկեր», Գ. Նժդեհ, Էդիթ Պրինտ, 2012 թ., էջ 138:
[2]Նույն տեղում, էջ 186:

- Գործնական խաղը մոդելավորում է ժամանակակից իրավիճակ, երբ աշակերտն ստանում է ժամանակակցի դերը, որն ուսումնասիրում է պատմական իրադարձությունը, որոշ դեպքերում դառնում է պատմական իրադարձության ականատես և մասնակից։
- Կոնկրետ պատմական կերպարներին անդրադառնալն նպատակ ունի վերաիմաստավորել ազատագրական պայքարի նվիրյալների կենսագրության հիմնական դրվագներ՝ հատկանշելու հերոսի բարոյա կամային բարձր ոգին, ինչը հնարավորություն կտա ուրվագծելու այն ուսումնական նյութը, որը դրական ազդեցություն կունենա սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության համար։

Կիրառվել են հետազոտության համար վերլուծության, համադրության, փորձի մեթոդները։

Հետազոտության վարկածները: Սովորողների մոտ ազգային արժեհամակարգի ձևավորումն ավելի արդյունավետ կլինի, եթե.

- Սովորողների կողմից ներառարկայական և միջառարկայական կապերի գիտակցված օգտագործումը դիտարկվի անհրաժեշտ գործընթաց և կրթադաստիարակչական գործընթացի անքակտելի մաս։
- Մշակվի հանրակրթական բնագավառում ներդրվի ազգային արժեհամակարգի ձևավորման և զարգացման մոդելը՝ հաշվի առնելով ազգային և համամարդկային արժեհամակարգի միաժամանակյա անհրաժեշտությունը։

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու ենթավերնագրերից եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից։

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՆ

Պատմություն առարկան ոչ միայն թվերի ու փաստերի ժամանակագրություն է, այլ ծանոթացում մարդկության ծագման փուլերին, պետությունների առաջացմանը, ձևավորման, զարգացման ու զբաղեցրած նրանց քաղաքական տեղին ու դիրքին: Մի շղթայական զարգացում, որը քաղաքակրթությունների զարգացման հետ միասին պահանջ է դարձրել պատմության, հայրենիքի, ազգային արժեքների պահպանում: Արժեքները ձևավորել են կերտելով ազգային դիմագիծ:

Հայ ժողովուրդը Հայկից սերված լինելով հարուստ է ու լի նվաճումներով, կորուստներով, պարտություններով ու հաղթանակներով: Շրջապատված լինելով թշնամական երկրներով կերտել է հայ մարդու կերպարը, ստեղծել ազգային մշակութային արժեքներ, որոնք դարձել են ազգի ինքնաճանաչման, ինքնադրսևորման և կենսագործունեության հիմնաքարը լեզուն, կրոնը, հայրենապաշտությունը:

Մեծ է ուսուցչի դերը սերնդի դաստիարակության գործում: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի դպրոցը: Այս նպատակին հասնելու համար ոչ միայն անհրաժեշտ է ուսումնասիրել հայրենի ու համաշխարային գիտությունների ճյուղերը, այլ՝ մանկավարժության անցյալի ու ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Բացի սովորողներին պատմական երևույթներին ծանոթանալուց, կարևոր է անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որին պետք է հասնել սովորողներին հաղորդակից դարձնել ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, պատմական հերոսների օրինակով սերմանել բարոյական արժեքներ՝ մարդասիրություն, բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատասխանատվություն, բարեխճություն և այլ հատկանիշներ:

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտներն ունեն աշխարհի նկատմամբ տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի, անձի հետ իրականացվում են ուսումնական հաստատությունները, մանկապատանեական կառույցները և տեղեկվատական տեխնոլոգիաների միջոցով:

Աշակերտները հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի վարքի ձևերը ապրելակերպը,հագուստը, կենցաղը և այլն: Ազդող գործոններից է սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի ու սոցիալական միջավայրի միջոցով, սակայն միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին: Աշակերտների արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է,երբ որ ձևավորվում են ըստ տարիքային առանձնահատկությունների:

Արժեքային համակարգը ձևավորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ապրելակերպում և այլն: Կարևոր է «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու

ձևավորումն է»։ Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող գործոնը միջանձնային հարաբերություններն են՝ ծնող, ուսուցիչ, ընկերներ։ Աշակերտը նրանցից կարող է ստանալ ինչպես դրական այնպես էլ բացասական արժեքներ։

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործությունը հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, ընտրելով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները աշակերտների մեջ սերմանում է իրավական, բարոյական, գեղագիտական գիտելիքներ և վերաբերմունք, նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում ըստ նպատակի օգտագործելու։ Արժեքների բուրգի գագաթին գտնվող մեծագույն արժեքը հայրենասիրությունն է։

Հրատապ խնդիր է ապագա պաշտպանների պատրաստման խնդիրը։ Պատահական չէ, որ խրախուսվում է երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությունը։ Հայ ժողովուրդը իր պատմության ողջ ընթացքում հերոսների պակաս չի զգացել, որոնց շնորհիվ դիմացել է հազարամյակների դաժան փորձություններին։ Հայոց ազատագրական պայքարի դրվագներ, գոյապայքարի վկայություններ, ժամանակն է ծնում հերոսների։ Ժողովուրդն ապավինելով նրանց քննախույզ մոտեցումով կատարել է ճշմարիտ եզրահանգումներ և քաղել դասեր։

«Հայրենիք ստեղծելը հերոսություն է,հայրենիք շենացնելը՝ առաքինություն»։

Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա

Վազգեն Սարգսյանը 1990-ական թվականներին կոչ արեց հավաքվել, միավորվել ու «երկաթյա շերեփի» օրենքով ստեղծել բանակ։ Նրանից շատերն էին վախենում,իսկ ինքը ափսոսում էր, որ չկարողացավ հաղթահարել իր վախերը։ Նա վախենում էր չվախեցողներից, անտարբերներից, կեղծ փրկիչներից, սրտացավության պակասից, ոչնչից չվախեցողներից, որակազրկումից, սուտ կոչումներց, ծակ փիլիսոփայությունից։ Ահա և մարդկային այն արժեզրկումները, որ ծնում է իրար սիրելու ներելու և հանդուրժելու անկարողությունը։[3]

Ըստ Նժդեհի՝ դպրոցը պետք է ապահովի հետևյալ պայմանները կրթության գործընթացը լավագույն կազմակերպելու համար.

- շեշտված նպատակի ու ծրագրի, դասավանդման հստակ մշակված համակարգի առկայություն,
- ձևավորի հայրենասիրական մթնոլորտ,
- պետք է ունենա ազգային գիտակցության ձևավորման նպաստող աշխատանքներ կազմակերպելու կարողություն,

[3] Գ. Նժդեհ, «Որդիների պայքարը հայրերի դեմ», «Ծուշիի առանձնակի գումարտակի ազատամարտիկների միավորում» ՀԿ, Երևան, 2015, էջ 73:

- պետք է կիրառի առարկայի մատուցման ստեղծագործական, զգացմունքային հագեցվածության եղանակ։

Երիտասարդության հայրենասիրական, ազգային արժեքների պահպանման գիտակցության դաստիարակության գործում Նժդեհը կարևորում է հայ կնոջ, մայրերի դերը . «Մայրերի ափի մեջ պիտի փնտրել ազգի ճակատագիրը»[4]։

Ժողովրդի, պետության կյանքում մտավորականության շարժիչ, վճռական դերը շեշտելով Նժդեհը գրում է «Պարտվում է մի ժողովուրդ, հենց որ պարտված է զգում իր մտավորականությունը»[5]։

Ամեն ազգային գաղափար, ուսմունք, գաղափարախոսություն արդիական էայնքան ժամանակ, որքան դեռ կարողանում է ծառայել իրեն հետևող ժողովրդի ռազմավարական շահերին, նրա ներկա և ապագա բարօրության և անվտանգության ապահովմանը։

Հայոց ազատագրական պայքարի դրվագները հայության ինքնահաստատման, գոյապայքարի վկայություններ են, որոնք ոգևորում են սերունդներին քննախույզ մոտեցում դրսևորել անցյալի իրադարձությունների նկատմամբ, կատարել ճշգրիտ եզրահանգումներ։

Պատմության յուրաքանչյուր դասին նախապատրաստվելիս կարևոր է բովանդակային մասը, որոնք նվիրված են նշանավոր գործիչներին և ոգեշնցում են ու հայրենասիրությամբ են վարակում աշակերտներին։ Աշակերտները բացահայտում են, թե ովքեր են իրենք, իրենց նախնիները, ինչ ներդրում ունեն համամարդկային մշակույթի ասպարեզում։

Ուսումնասիրելով հերոսական էջեր, հերոսների անձնվիրում, ինքն էլ կարծես վարակվում է ձգտում հասնել կերպարին։ Դրա վառ օրինակը վերջին պատերազմներին մասնակից հայորդիներն են, որոնք նետվեցին մարտի՝ մոռանալով սեփական կյանքի մասին[6]։

Պատմության ծրագիրը պետք է կազմված լինի գիտամանկավարժական հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան,որտեղ պետք է լինի նյութի մատչելիություն, տարիքային համապատասխանություն, գիտամեթոդական բազմազանություն։

Կարևոր է միջառարկայական կապերի միջոցով վառել հայրենասիրության կրակը՝ պատմավեպարի հերոսների, նրանց անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով։ Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, և սերը երեխաների նկատմամբ, ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են։

Դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է ոչ միայն մտավոր, այլև բարոյական,

[4] «Հայագիտություն» ամսագիր, 2010, էջ 27:
[5] «Հայագիտություն» ամսագիր, 2016, էջ 28:
[6] Ս. Գևորգյան, «Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման բնույթը», Երևան, 2000 թ., էջ 59:

գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Դաստիարակության համակարգի վերափոխումն անհրաժեշտ է սկսել ուսուցչի և պետության վերաբերմունքի փոփոխությունը ուսուցչի նկատմամբ:

Ուսուցիչը պետք է լինի աշխատասիրություն դաստիարակողը դպրոցականների մոտ, արժեքավոր կողմնորոշողը աշակերտների մասնագիտության հարցում, հարգանք ծնողի նկատմամբ, խաղը և աշխատանքը մանկավարժական ստեղծագործությունների աշխատանքում: Դպրոցից պետք է սկսել աշակերտի աշխարահայացքի, համոզմունքների ձևավորումը, ունենալ քննադատական վերաբերմունք սեփական անձի և շրջապատի նկատմամբ:

Այսօվա դաստիարակության, մանկավարժության, դպրոցի նպատակն է ազգի գոյության պահպանումը և նրա երջանկությունը: Դաստիարակությունը պետք է երեխայի մեջ ստեղծի և զարգացնի ազգային գաղափարախոսությունը,ազգային ինքնագիտակցությունը: Ազգի դաստիարակությունը ենթադրում է համամարդկային որակների ձևավորում:

Պատմության առարկայի դասավանդման նպատակը՝ ստեղծագործ բանիմաց, բարձր բարոյական արժեքներ կրող ՀՀ քաղաքացու ձևավորումն ու զարգացումը: Ազգային գիտակցությամբ օժտված համակողմանի զարգացած, լիարժեք դաստիարակություն ստացած, համամարդկային արժեքներով առաջնորդվող ազատ, գիտակից քաղաքացի մարմնավորելը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումն աշակերտների մոտ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության նրա ստեղծած մշակութային արժեքների ,գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Ձևավորվում է պետականամետ մտածելակերպ ունեցող ազգային և համամարդկային արժեքներ կրող, ազգային դիմագիծ ունեցող պատասխանատու քաղաքացի:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգի դաստիարակչական խնդիրների լուծումն: Խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ազատ է արտահայտում կարծիքներ:

Անհատական աշխատանքում դաստիարակում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթելու գործում ձևավորում է համառության, ինքնակազմակերպման և ինքնքավերահսկման ընդունակություններ:

Այսօր շատ կարևոր է նոր սերնդի դաստիարակությունը ձևավորված ազգային չափանիշներով ու ըմբռնումներով,առանձնահատկություններով: Ազգային կենցաղի, բնաշխարհի յուրահատկությունների, խորհրդանիշների հետ ծանոթությունը, հաղորդակցումը նպաստում է ազգային բարոյական հիմքերի ձևավորմանը, որը միշտ էլ եղել է մանկավարժական գիտության հիմնական հիմնահարցերից մեկը:

Ազգային և համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում: Մարդը յուրացնում է լեզուն, մշակույթը, հոգեբանությունը և այլ որակներ՝ ձևավորվելով որպես տվյալ ազգի լիարժեք անդամ: 21-րդ դարում տարածում է գտել գլոբալիզացումը, այդ պատճառով պետք է երեխաների հետ խոսել ազգային արժեքների դերի և կարևորության մասին: Անընդհատ հիշեցնել ով ենք, փառավոր անցյալը, և այն, որ մենք չենք կարող կորցնել, ինչ արյան գնով պահել ու փոխանցել են մեզ:

Շատ կարևոր է վեր հանեն կարևոր փաստերից այն, որ հայ ժողովուրդը եկվոր չէ, այլ ձևավորվել է Հայկական լեռնաշխարհում, պահպանել ու զարգացրել է ինքնատիպ մշակույթը, ազգային նկարագիրը:

Մարդկության պատմո ության արդի փուլում, մեր տարածաշրջանում դարձյալ բախվում են աշխարհի մեծ տերությունների շահերը: Պատմական փորձը ցույց է տալիս ուղղորդող անհատները միջազգային հարաբերություններում պետք է լինեն զգոն և հավասարակշռված, պետք է մտածեն ոչ թե հակամարտելու, այլ առավել շահելու մասին:«Մեծերը» չեն ներում «փոքրերի» ինքնուրույն քայլերը: Այդպես էր անցյալում, այդպես է հիմա[7]:

Ինքնությունը բազմաթիվ անհայտներով մի կառույց է՝ պարուրված խորհրդանիշներով, իրապատումներով, որոնք ժամանակի ընթացքում տարբեր բացատրություններ: Այս առումով միշտ էլ առաջանում է ինքնության պատմական ձևերի իմաստավորման և ազգային տարրերի արդիականացման անհրաժեշտությունը:

Ինքնաճանաչողությունը երկխոսություն է անցյալի հետ,որի ժամանակ անցյալը դառնում է ներկա: Մեր անցյալի պատմամշակութային ժառանգությունը պահվում է Ազգային գրադարանում ու Մատենադարանում: Անցյալը բացակայում է ներկայի մեջ, գերակշռում է ձևական մոտեցումը: Յուրաքանչյուր ուսուցչի քաղաքացիական ձգտումն է դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ:

Պատմություն առարկան նպաստում է ամբողջական պատկերացումների ձևավորմանը, համամարդկային հիմնանդրի գիտակցմանը, հարափոփող աշխարհում հասարակական բարդ հարաբերություններում ու տեղաշրժերում կողմնորոշմանը:

Ճանաչողական արժեքը պահանջում է անցյալի պատմական փաստերը ինքնուրույն վերլուծելու, եզրահանգումներ կատարելու, կանխատեսելու ընդունակություններ:

Պատմություն առարկայի հիմնական նպատակն է սովորողներին ամբողջական գիտելիքներ հաղորդել մարդու և հասարակության մասին,դաստիարակել ազգային և համամարդկային արժեքներով օժտված ու սոցիալապես ակտիվ քաղաքացի, ձևավորել սեր ու հետաքրքրություն սեփական և այլ ժողովուրդների պատմության ու մշակույթի վերաբերյալ, հայրենասիրություն և ազգային հպարտություն, հայրենիքին ծառայելու և այն պաշտպանելու պատրաստակամություն:

[7] «Հայագիտությունը դպրոցում», 2017, էջ 22:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ակնկալվում է, որ «Հայոց պատմություն» և «Համաշխարային պատմություն» առարկաների դասավանդման արդյունքում սովորողը պետք է.

- ձևավորի ազգային ինքնքագիտակցություն, գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,
- կարևորի պետության և ազգային կառույցների դերը հայապահպանության և Հայաստանի զարգացման գործում,
- կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում և կամք,
- գիտակցի ներկան և ապագան կերտելու գործում ազգային պատմության իմացության նշանակությունը
- գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,
- հարգալից վերաբերմունք ունենա աշխարհի այլ տարածաշրջաններում և մայրցամաքներում ապրող ժողովուրդների և ազգերի, նրանց ապրելակերպի ավանդույթների ու մշակույթի նկատմամբ,
- գիտակցի խաղաղության, միջազգային համագործակցության կարևորությունը մարդկության առջև ծառացած համընդհանուր խնդիրներ լուծելու տեսանկյունից:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Մեր մշակած դասերի ընթացքում փորձում ենք օգտագործել ուսուցման ակտիվ ձևեր՝ նպաստելով առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացմանը, պատմական նյութի ընկալմանը: Պատմության դասին կարելի է կազմակերպել քննարկումներ:

Աշակերտները դառնում են պատմական իրադարձության ականատես և մասնակից: Պետք է պատկերացում ունենա իր կերպարի բնավորության,զգացմունքների, մտքերի հայացքների վերաբերյալ: Դերերը թույլ են տալիս աշակերտին մտնել պատմական ժամանակի մեջ:

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ստորև ներկայացնում եմ դասի պլան։ Դասի ընթացքում կհնչեն հայրենասիրական երգեր։ Հայոց պատմության բոլոր դասերը սովորողների մոտ ձևավորում են արժեքներ։ Ուսուցչին հնարավորություն են տալիս զարգացնելու աշակերտների հետազոտելու, վերլուծելու, բացահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունները։

Առարկա-Հայոց պատմություն	
Դասարանը- 11-րդ դասարան	
Դասի թեման	Զինված պայքարը հայդուկային շարժումից մինչև համընդհանուր ապստամբության գաղափարախոսություն
Դասի նպատակը	Ձևավորել՝ Զինված պայքարի առաջացման պատճառների, նպատակների վերաբերյալ գիտելիք։ Զինված պայքարի դերն ու նշանակությունը հետազոտելու և վերլուծելու հմտություն։ Հետևյալ արժեքները՝ հայրենասիրություն, հայրենապաշտություն, հպարտություն, ազնվություն։
Վերջնարդյունքները	Գիտելիք 11.4.1. Հետազոտի պայքարի զինված փուլի ձևավորման պատճառները,նպատակները և ավարտը։ Արժեհամակարգ 11.4.2. Ձևավորի բանիմաց վերաբերմունք զինված պայքարի դերի ու նշանակաության վերաբերյալ։ Հմտություն-համագործակցում 11.4.3 Խմբով վերլուծի և քննի պատմական այլ աղբյուրներ՝ դրսևորելով համագործակցելու հմտություն։ Գործողություն 11.4.4. Վերլուծի գրական և գիտական այն ստեղծագործությունները որտեղ ներկայացված է ազատագրական պայքարի գործիչների գործունեությունը և ներկայացնի այդ գործիչների անձնային նկարագիրը։
Դասի տիպը	Նոր նյութի մատուցում
Ընդհանրական խաչվող հասկացություններ	Անհատներ և հարաբերություններ
Միջառարկայական	Դասանյութի ուսումասիրությունը կապված է

ներառարկայական կապերը	Հասարակագիտություն առարկայի՝ անհատներ,Ռազմագիտություն առարկայի՝հայդուկային շարժում,Հայ գրականություն առարկայի՝հայդուկային շարժման՝գործիչների, մասին գրված գրական ստեղծագործություններ՝«Ինձ բահ տվեք»,Համաշխարհային պատմության՝ Օսմանյան կայսրություն թեմայի հետ:
Անհրաժեշտ նյութեր,տեխնիկական միջոցներ:	Գիրք, տետր, գրիչ, քարտեզ,ատլաս, համակարգիչ,լուսացրիչ ,նկարներ, Գիտական գրականություն, Ա4 չափի թուղթ, մատիտներ
Կիրառվող մեթոդներ	Հարց ու պատասխան, դերային ներկայացում, քարտային աշխատանք, ձևավորող գնահատում.
Կապը ՀՊՉ հետ	Մ11, Մ14, Մ16, Մ17
Դասի փուլերը Ներածություն Հիմնական մաս	Դասի սկզբում ուսուցիչը ընդհանուր հարցերով 3-5 րոպե տևողությամբ սովորողների մոտ զարգացնում է հետաքրքրությունը թեմայի նկատմամբ՝տալով հետևյալ հարցերը 1.Ձեր կարծիքով ի՞նչ է հայդուկային շարժումը և ե՞րբ և ինչո՞ւ այն սկիզբ առավ: 2.Ի՞նչ կարևորագույն դեմքեր գիտեք ձեզ հայտնի: Աշակերտները փորձում են պատասխանել հարցերին: /2րոպե Ուսուցիչը , սահկաշարի օգնությամբ ներկայացնում է նոր թեման: /10 րոպե Թեման ընկալելի դարձնելու նպատակով ուսուցիչը կիրառում է Դերային ներկայացման մեթոդը. Դրվում է դերային ներկայացման հիմնախնդիրը. Զինված պայքարը հայդուկային շարժումից մինչև համընդհանուր ապստամբության գաղափարախոսություն. Դրվում է դերային ներկայացման հիմնական ուղղությունները. Դերերի՝ **Նպատակները և շահերը** Ներկայացնել զինված պայքարի հայդուկային փուլն ու համընդհանուր ապստամբության գաղափարախոսության

ձևավորման պատճառները:

Իրականացված քայլերը

Ներկայացնել հայդուկային պայքարի ռազմական ընթացքը և մղած ճակատամարտերը:

Ձեռքբերումները

Ներկայացնել հայդուկային պայքարի արդյունքում յուրաքանչյուր կողմի ունեցած ձեռբերումները՝հայ ժողովրդի մի զգալի հատվածի՝հայդուկային պայքարի շնորհիվ կոտորածներից փրկվել ու հանգամանքները,միջազգային արձագանքը:

Իրականացված քայլերի արդյունքներն ու հետևանքները

Ներկայացնել հայդուկային պայքարի արդյունում ունեցած արդյունքները,մասնավորապես՝զինված պայքարի արդյունքում ձեռք բերված ռազմական փորձը,հայության մի ստվար մասի փրկությունը,Մեծ տերությունների մասնակի միջամտություն ն ու այս ամենի հետևանքով ընդհանուր ապստամբության գաղափարախոսության ձևավորումը:

Աշակերտները վիճակահանության սկզբունքով ընտրում են իրենց դերերը. 3ր.

Դերեր

●Հեղինակ

Հայաստան

●Արաբո

●Աղբյուր Սերոբ

●Գևորգ Չաուշ

●Անդրանիկ

●Հրայր Դժոխք

●Սոսե

●ժողովուրդ

·Գյուղացիներ

·տանուտեր Ավե

·Քաղաքաբնակներ

·Առևտրականներ

·Արհեստավորներ

●Հայ քաղաքական կուսակցություններ

Տարածաշրջան/երկրներ

●Օսմանյան կայսրություն

·Աբդուլ Համիդ

·Բշարե Խալիլ

	●Ռուսաստան ●Եվրոպա Ուսուցիչը տրամադրում է նկարները,ապա լուսացրիչի միջոցով ցուցադրում դրվագներ թեմայի վերաբերյալ մոտ 2 րոպե ,որից հետո սովորողներին տրվում է ժամանակ նախապատրաստվելու համար. 10ր. որից հետո հերթով ներկայացնում են յուրաքանչյուրն իրեն հատկացված դերը. 10ր. Հեղինակը ներկայացնում է ընդհանուր իրավիճակն ու զինված պայքարի պատճառները: Արաբոն,Աղբյուր Սերոբը,Գևորգ Չաուշը,Անդրանիկը,Հրայր Դժոխքը, Սոսեն պատասխանում են հետևյալ հարցերին՝յուրաքանչյուրը 2-3 րոպեի սահմաններում. 1.Ո՞րն էր զինված պայքարին անցման պատճառը և ինչու՞ այն վեր չածվեց համընդհանուր ապստամբության: 2.Ո՞րն էր իր ձեռքբերումը և ո՞րը՝անհաջողությունը: Այնուհետև՝ժողովուրդը՝գյուղացիները,քաղաքաբնակները,առևտրակ անները և արհեստավորները, ներկայացնում են իրենց իրավիճակը 1 նախադասությամբ՝պատասխանելով հետևյալ հարցին . 1.Ի՞նչ բացասական կամ դրական դեր կատարեց զինված պայքարն իր կյանքում: Սրանից հետո հայ քաղաքական կուսակցություններին կերպարանավորող աշակերտը պատասխանում է սույն հարցին՝ ներկայացնելով կուսակցությունների ընդհանուր դիրքորոշումը. 1.Ո՞րն էր զինված պայքարի կազմակերպման գործում հայ քաղաքական մտքի նպատակը,ո՞րը եղավ ձեռքբերումը և ո՞րը՝ձախողումը: Դերային դասի վերջին հատվածում հանդես են գալիս արդեն Օսմանյան կայսրությունը՝ ի դեմս Աբդուլ Համիդի և Բշարե Խալիլի՝ ներկայացնելով զինված պայքարի ճնշմանը և հայ հայդուկներին ֆիզիկապես ոչնչացմանը միտված իրենց նպատակները,ձեռքբերումներն ու անհաջողությունները. 1.Ինչու՞փորձեցի վերջ դնել հայ ազատագրական զինված պայքարի ընթացքին,որտե՞ղ հաջողեցի,որտե՞ղ թերացա; Այս փուլում վերջնական կարծիք և տեսակետ են հայտնում Ռուսաստանին և Եվրոպային մարմնավորող աշակերտները. 1.Ի՞նչ կարծիք ունեի հայ ազատագրական զինված պայքարի վերաբերյալ և ի՞նչ ներդրում ունեցա այդ գործում:

	Այնուհետև հեղինակը ամբողջացնում է դասը՝զուգահեռներ տանելով այլ առարկաներից ստացած գիտելիքների հետ և ստեղծելով միջառարկայական կապեր՝ այդպիսով էլ ավելի կայունացնելով թեմայի հետազոտության արդյունքները աշակերների մոտ: /2 րոպե
Ամփոփում	Սովորողները թղթից պատրաստված քարտերի օգնությամբ կարողանում են տալ կարևորագույն հարցերի պատասխանները /5 րոպե Ի՞նչ իմացանք հայդուկային շարժման մասին Ինչո՞ւ առաջացավ հայդույկային շարժումն, ու ո՞րն էր նրա առաջացման գլխավոր պատճառը: Ովքե՞ր էին հայդուկային շարժման գլխավոր դեմքերը Ի՞նչ հետևանք ունեցավ շարժումը հայ ազգի համար,և ո՞րն էր հայդուկային շարժման նշանակությունը Հայոց պատմության մեջ:
Գնահատում	Կատարվում է հիմնականում ձևավորող գնահատում՝ որտեղ հաշվի է առնվում նաև դերային կատարմանը համապատասխան պահանջները. 3ր. -փաստարկելու կարողություն - խոսքի կիրթ, գրագետ ձևակերպում -խոսքի արտահայտման և բառապաշարի համապատասխանեցում իր կողմից մարմնավորող դերին -կեցվածքի, քայլվածքի, դիմախաղի հնարավոր համապատասխանություն - դերը սկսելու, շարունակելու, ընդհատելու դեպքում այն շարունակելու ունակություն
Տնային առաջադրանք	Դասանյութի յուրացմանը զուգահեռ՝ տետրի մեջ գրավոր պատասխանել հետևյալ հարցերին. 2ր. 1.Ի՞նչ նախադրյալներ կային զինված պայքարի գաղափարախոսության ձևավորման համար:Հայդուկային շարժման առաջացման վերաբերյալ ի՞նչ տեսակետներ կան: 2.Ովքե՞ր էին հայդուկները և ի՞նչ նպատակ էին դրել իրենց առջև: Ընթերցել Ս.Պողոսյանի,Կ.Պողոսյանի «Ինձ բահ տվեք» վեպը: Պատրաստել կենսագրական լրացուցիչ նյութ հայդուկային պայքարի՝ իր նախընտրած գործիչի մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տարբեր աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը պատմություն առարկայի ամենակարևոր մասն է:

Հաշվի առնելով ներկայիս աշխարհաքաղաքական դրությունն ու ռազմաքաղաքական իրավիճակի սրումները մեր տարածաշրջանում, շատ կարևոր է դպրոցական առարկայի շրջանակում օգնել աշակերտներին հիմնարար գիտելիքներ ձեռք բերելուն զուգահեռ նաև ամրացնել ազգային, պետականամետ մտածողությունը:

Ուսումնասիրության արդյունքում հասկանում ենք, որ այս խնդիրը մշտապես ուղեկցել է հայ ժողովրդին՝ պատմության բոլոր փուլերում. տարբեր են սակայն մեթոդները ու գործիքակազմը, որով դարերով փոխանցված արժեքներն ու պատմամշակութային ժառանգությունը արժանվույնս կփոխանցվեն հաջորդ սերունդներին:

Մեր ուսումնասիրության մեջ նշել և ուղեգծել ենք պատմություն առարկայի դասապատրաստման հստակ ծրագրի օրինակներ և եկել այն եզրակացությանը, որ ժամանակակից դպրոցում պատմություն առարկան ինտերակտիվ մեթոդներով պետք է մատուցվի, որպեսզի դյուրըմբռնելի լինի նոր սերնդի համար:

Հստակեցրել ենք նաև այն, որ առարկայական ծրագրի առանցքում պետք է լինի ոչ թիվ-փաստ-իրադարձություն համակցությունը, այլ՝ առանձին իրադարձությունների, հասարակական-քաղաքական գործիչների, ազգանպաստ գործունեություն ծավալած անհատների կերպարների ուսումնասիրությունը: Պատմություն առարկան դասավանդելու մեթոդների բուն նպատակն ենք համարում նաև սովորողների մոտ ազգային արժեհամակարգ վեր հանելը, արժանապատվություն և հայրենասիրություն արժեքները ուսուցանելը:

Առարկայական ծրագրի առանցքում ենք դիտարկում նաև քննական մտածողության զարգացումը, որը կարծում ենք էլ ավելի կնպաստի ազգային արժեքային համակարգի ձևավորմանը և տարածմանը:

Ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն եզրահանգմանը, որ ուսումնասիրության առարկան պետք է դիտարկվի թե' ազգային-պետական, թե' տարածաշրջանային, թե' գլոբալ իրադարձությունների համատեքստում՝ նպաստելով միջառարկայական կապերի ամրապնդմանը և աշակերտների քննական մտածելակերպի զարգացմանը: Հաշվի առնելով գլոբալիզացման ժամանակակից միտումները ծրագրային օրինակի մշակման մեջ առանձնակի կարևորություն ենք տվել ոչ միայն հերոսական կերպարների օրինակներին, այլ շեշտել ենք պետության գոյության կարևորությունը: Այս կերպ նպատակ ունենալով աշակերտներին սովորեցնել ոչ միայն անձի առանձին որակների, այլ համակարգային՝ ազգային, պետական մտածելակերպի և այդ գաղափարախոսությունը կրող կառույցներ ստեղծելու, պահպանելու կարևորությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գ. Նժդեհ, «Հավատամք», Երևան, 2011 թ. էջ 2:
2. Գ. Նժդեհ, «Գրական երկեր», Էդիթ Պրինտ, 2012 թ., էջ 138:
3. «Հայագիտությունը դպրոցում» գիտամեթոդական վերլուծական հանդես, Երևան, 2017 թ., էջ 39:
4. «Հայագիտություն», 2016 թ., էջ 29 - 51:
5. «Հայագիտություն», 2010 թ., էջ 27:
6. «Հայագիտությունը դպրոցում», 2017 թ., էջ 22:
7. Ս. Գևորգյան, «Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման բնույթը», Երևան, 2000 թ., էջ 59:
8. Հ. Պապոյան «Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում», Երևան, 2013 թ., էջ 15:
9. ««Հայոց պատմություն» 8-9 դասարանների ուսուցչի ձեռնարկ», Զանգակ, Երևան, 2013 թ., էջ 9:
10. ««Համաշխարհային պատմություն» ուսուցչի ձեռնարկ, Զանգակ, 2009 թ., էջ 16: